



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2020 թվականի N 62-Ա

Ա. ԲԱՎԵՅԱՆԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով *Ա. Բավեյանի* անձնական դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 14 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Անդրանիկ Բավեյանին* տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2020 թվականի մարտի 8-ից մինչև մարտի 12-ը ներառյալ՝ 5 օր:

2. *Անդրանիկ Բավեյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի N 14 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ *Էլինա Մելքունյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2020 թվականի փետրվարի 26
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

